



**ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ
ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

«Արցախբանկ» ՓԲԸ դեկավարությունը ներկայացնում է Բանկի 2015թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները:

2015թ. Բանկի համար անցյալի գործունեության արդյունքների ամփոփման և զարգացման հիմքի և նոր ուղղության ընտրության տարի էր: Հատկանշական է, որ հաշվետու տարում ձևավորվել է Բանկի ռիսկերի կառավարման նոր համակարգը, կատարելագործվել է ընդհանուր կանոնակարգվածությունը, միաժամանակ խստացվել է ներքին վերահսկողությունը:

Բանկի ակտիվները 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 93,998 մլն ՀՀ դրամ՝ աճելով 6,344 մլն ՀՀ դրամով կամ 7.2%-ով նախորդ տարեվերջի համեմատ:

Բանկի ընդհանուր կապիտալը 2015թ. վերջի դրությամբ աճել է 3%-ով՝ տարվա վերջին կազմելով 11,016 մլն ՀՀ դրամ: Հաշվետու տարում Բանկի կայունության ապահովման համար կարևոր քայլ էր Բանկի կանոնադրական կապիտալի համալրումը 4.5 մլրդ ՀՀ դրամով, ինչպես նաև 3 մլն ԱՄՆ դոլար և 930 մլն ՀՀ դրամ գումարով ստորադաս փոխառությունների ներգրավումը: Հատկանշական է, որ վերոնշյալ համալրումն իրականացրած՝ Բանկի նոր բաժնետեր «Հայաստանի բիզնեսի հիմնադրամ» ՓԲԸ-ն ակտիվ մասնակցություն ունի ԼՂՀ տարածքում արդյունաբերության, շինարարության և գյուղատնտեսության ոլորտների ֆինանսավորման ծրագրերում:

Ռեսուրսային բազայի ընդլայնման գործում Բանկը կարևորում է ազգաբնակչությունից հավաքագրված խնայողությունների դերն ու նշանակությունը, քանի որ վերջինիս միջոցով արտացոլում է բնակչության՝ բանկի նկատմամբ ունեցած վստահությունը: Բանկի ֆիզիկական անձ հաճախորդներից ներգրավված միջոցների ծավալը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 35,085 մլն ՀՀ դրամ՝ նախորդ տարեվերջի համեմատ աճելով 2.3%-ով:

Հաշվետու տարում Բանկը շարունակել է պահպանել պլաստիկ քարտերի թողարկման աճի տեմպեր և զարգացրել է դրանց սպասարկման ենթակառուցվածքը: Թողարկված քարտերի քանակը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ աճել է 4%-ով և կազմել

41.186 հատ: 2015թ. պլաստիկ քարտերով գործառնությունների ծավալները (ներառյալ կանխիկացումները) կազմել են 49.220 մլն ՀՀ դրամ՝ 2014թ. համեմատ աճելով 18.8%-ով:

2015թ. վերջի դրությամբ Բանկի ակտիվների գերակշիռ մասը՝ 68%-ը, կազմել են 63.511 մլն ՀՀ դրամ գումարով հաճախորդներին տրամադրված վարկերը և փոխառությունները: Վերջին տարրներին տնտեսության իրական հատվածում առկա հիմնախնդիրները, բնակչության գնողունակության անկումն ու սոցիալական պայմանների վատթարացումն իրենց ազդեցությունն են ունեցել Բանկի գործունեության, մասնավորապես՝ վարկային պորտֆելի դրակի վրա: Արդյունքում Բանկը 2015թ ամփոփել է 4.174 մլն ՀՀ դրամ վնասով:

Բանկի ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է «Ֆինանսական ռիսկերի վերաբերյալ նվազագույն բացահայտումներ» թիվ 35 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն ու կառավարմանն ուղղված բանկի կողմից իրականացվող քաղաքականությունը:

Բանկի եռամյա հեռանկարի առանցքային ուղեծնիշ կհանդիսանան կառավարված փորձի հիմքի վրա նոր ծառայությունների ներդրումն, ակտիվ մարքեթինգային քաղաքականության իրականացումը՝ նպաստելով ՀՀ բանկային համակարգում Բանկի դիրքի բարելավմանը: Առանձնապի ուշադրություն կդարձվի կորպորատիվ կառավարման, ռիսկերի, ինչպես նաև մարդկային ռեսուրսների կառավարման համակարգերի կատարելագործմանը: Բանկը կձգտի ընդլայնվել թափանցելով նոր շուկաներ, ապահովել ծառայությունների մատուցման բարձր որակ՝ արդյունքում ձևավորելով բարձր գործարար վարկանիշ: ապահովելով կայուն ֆինանսական արդյունքներ:

Խորհրդի նախագահ՝

Խորհրդի նախագահի տեղակալ՝



Հ. Կապրիբեյան

Ա. Գոմցյան